

գերընտիր վարդապետին. վերստին գաղափարումն ի թուակահուութեան Հայոց տօմարի. ՌՄՁԵ (= 1836) ամին 25 ամսոյն մարտի»։ (Տաշ. Յուդ. էջ 420)։

Բ. յիշատակարանէն կ'իմացուի որ Յակոբ Քանքանեան մինչեւ 1826 կը շրջագայի տօմարական տեղեկութիւններ քաղելու համար։ Մանուկ եւ Ղազար անուամբ եղբայրները «հարցաքննեալ տեղեկացայ զի ունէին ԴԺ. ան ազգաց տօմարըն. այլ եւ ծննդագիրն՝ զոր արարեալ է Տէր Խաչիստ սրբակնացադ վարդապետն. յորժամ լուայ զլուր ծննդագրին՝ լցայ անպատմելի խնդութեամբ եւ առի ի նոցանէ զաղիւսակն լուսնագրին եւ նովաւ շինեցի զլուսնացոյց եւ զտեղեկացոյց, բայց զտօնացոյցն ի վերայ Սիմէոնի տօնացոյցին գաղափարեցի... Ընդ իս եւ գործակից եղբայրն իմ ըստ հոգւոյ Նիկողայոս Սաւրանցեան համախոհ իմ լեալ... տետրակս գծագրեցինք. Էյլն. (անդ. էջ նոյն.)։

Գ. եւ Դ. յիշատակարաններէն դարձեալ կ'իմացուի որ Մ. Մանուկ Սամուրշի Մարուքեան (Մարութեան) Երուսաղէմի մէջ ընդօրինակած է նոյն ձեռագիրը եւ աչակերտը եղած է Յակոբ Դպիր Քանքանեանի, այլ սակայն չէ աւարտած արհեստը. եւ զեռավարժ ընդօրինակած է զայն (անդ. էջ, նոյն.)։

ՄԱՏԹԷՈՍ ԱԲ. — Մբ. 1393 ին Ս. Փրկիչ վանքին մէջ կը պաշտօնավարէր։

ՄԱՏԹԷՈՍ ԱՅՎԱՏԵԱՆ, ԿԵՍԱՐԱՅԻ (Մուսնուսուն). — Հայրը՝ Մկրտ զաղփա։ Ծ. 1830 ին։ Տնօրէն-խմբագիր Արարտ Օրաթերթին (1871էն սկսեալ) եւ Ազգ. երեսփոխան։ 1869 ին Ս. Յակոբի վանքին մատենադարանին կը նուիրէ չորս ձեռագիրներ. Ա. Ս. Բարսղի Կեսարացիին ճառք վեցօրեայ արարչութեան. Բ. Սաւուռի Անեցիի պատմութիւնը. այս երկուքը ՈԱԶ (= 1187) ին ընդօրինակուած են Հոռոմոսի վանքին մէջ (ՄՁ. Թ. 1801)։ Գ. Խոսրով Անձեաղեաց եպս. Քաղսրոպիս ժամկալագրութեան. Դ. Մովսէս վրդ. Քաղսրոպիս Ս. Պատարագի. վերջին երկուքը մագաղաթեայ են եւ գրչութեան թուականները անորոշ։

Այվատեան Ս. Բարսղի վեցօրեայ բաղդատած է Մխիթարեանց տպագրեալ օրինակին հետ եւ տարբերութիւնները նշանակած է լուսանցքին վրայ, (Սիօն, 1869, էջ 13 — 14)։ Անմեղ